ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 սեպտեմբերի 2025 թվականի N 1332 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 5-Ի N 21-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի հունվարի 5-ի «Գերակա ոլորտում իրականացվող ներդրումային ծրագրի շրջանակներում ներմուծվող տեխնոլոգիական սարքավորումների, դրանց բաղկացուցիչ ու համալրող մասերի, հումքի և (կամ) նյութերի նկատմամբ սակագնային, մասնավորապես, ներմուծման մաքսատուրքից ազատելու արտոնությունից օգտվելու համար «ՄԵՏԱԼ ՈՒՈՐԼԴ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներկայացված հայտը բավարարելու և արտոնությունը կիրառելու մասին» N 21-Ա որոշման հավելվածում կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները՝

1) «ՀՈՒՄՔ ՈՒ ՆՅՈՒԹԵՐ» աղյուսակի 1-ին կետի «Տեսիկական բնութագիրը» սյունակի «Անագապատ, լաքապատ, առանց պոլիմերային ծածկույթի, թերթերով՝ 600 մմ-ից ավելի լայնությամբ» բառերը փոխարինել «Անագապատ կամ քրոմապատ լաքապատ և տպագրված լաքապատ, առանց պոլիմերային ծածկույթի, թերթերով՝ 600 մմ-ից ավելի լայնությամբ» բառերով.

2) «ՀՈՒՄՔ ՈՒ ՆՅՈՒԹԵՐ» աղյուսակը 11-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 11.1-11.2-րդ կետերով.

«

11.1	4808100000	Ծալքավոր թուղթ և ստվարաթուղթ՝ գլանափաթեթներով կամ թերթերով	Որպես փաթեթավորման մատերիալ օգտագործելու համար	կգ	230 000	Չինաստան, Թուրքիա, Վրաստան, Գերմանիա, Իրան, ԵՄ երկրներ	Չինաստան, Թուրքիա, Վրաստան, Գերմանիա, Իրան, ԵՄ երկրներ	80 000 000	
11.2	4804119000	Կրաֆտ թուղթ գլանափաթեթներով կամ թերթերով	Որպես փաթեթավորման մատերիալ օգտագործելու համար	կգ	100 000	Չինաստան, Թուրքիա, Վրաստան, Գերմանիա, Իրան, ԵՄ երկրներ	Չինաստան, Թուրքիա, Վրաստան, Գերմանիա, Իրան, ԵՄ երկրներ	35 000 000	

».

3) հավելվածի ցանկի «ԸՆԴԱՄԵՆԸ» պարբերությունում «49 871 000 000» թիվը փոխարինել «49 986 000 000» թվով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

18.09.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ